

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (86)

2020 թ.

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո ղ Ի ո լ ր ղ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.

գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան - ի.գ.թ

գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Նիկոլայ Ստոյկո - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Ղավիթ Ավետիսյան - ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.

Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.

Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է

հրապարակել նյութեր՝ համամիտ

չլինելով հեղինակների

տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am

Ղախիչ՝ 77771

Տպագրական 8 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

24.12.2019

Հանձնված է տպագրության

15.05.2020

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ъ Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (86)
2020 г.

Главный редактор:
академик НАН РА,
д.ю.н., проф. Гагик Казинян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Р е д а к ц и о н н ы й с о в е т

Самвел Дилбандян - д.ю.н.

зам. главного редактора

Карен Геворгян - к.ю.н.

зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Николай Стойко - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Ваге Оганнесян - д.ю.н.

Тарон Симонян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: [http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 24.12.2019
Подписано к печати 15.05.2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Օլիմպիա Պեղանյան

ԲՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՐՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ 4

Վարդան Պողոսյան, Նորա Սարգսյան

ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԷԿՈԼՈՅԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 13

Նորայր Բալայան

ՀԱՄԱԶՓՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 33

Հովսեփ Բեդկյան

ՎԿԱՅԻ ՑՈՒՑՄՈՒՆՔ ՏԱԼՈՒՑ ԱԶԱՏՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 39

Թաթուլ Մանասերյան

ԳՆԱՃԻ ԶՍՊՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 46

Արթուր Վարդանյան

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՊՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ . 52

Տիգրան Ղազարյան

ԴԱՏԱԽԱԶԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ, ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ 60

Առնոլդ Վարդանյան

ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՁԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԱՎՈՐԵԼՈՒ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 71

Դավիթ Զիլֆինյան

ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽԿԻՆ ԱՇԽԱՏԱԿԻՑ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑՆ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 78

Գրիգոր Չոբանյան

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՆԻՇԵԱՆՈՒԹՅՈՒՆ 89

Արմեն Զաքարյան

ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱՎԱՐԳԻ ՏԵՂԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՈՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 96

Սերգեյ Միրզոյան

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՄԻԿՐՈԼՈԳԻԱՅԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 111

Արտակ Հովհաննիսյան

ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ 119

ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ

Օլիմպիա Գեղամյան

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության
ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու*

Սեփականությունը՝ որպես տնտեսական հարաբերությունների ամբողջություն, ձևավորվել է դեռևս մարդկային փոխհարաբերությունների ձևավորման վաղ շրջանում: Հասարակության պատմական զարգացման ընթացքում սեփականության հարաբերություններն ամենատարբեր գործոնների ազդեցությամբ փոփոխվել են (տնտեսական զարգացում, ռազմական նվաճումներ, պետության կառավարման ձևի ու քաղաքական իշխանության փոփոխություններ և այլն): Դրանց համապատասխան էլ փոփոխվել են հասարակական արտադրության եղանակները: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հասարակական-տնտեսական ֆորմացիաներին, որոնք հասարակության պատմականորեն որոշակի տիպերն են՝ իրենց բնորոշ արտադրության եղանակով և դրանով պայմանավորված՝ քաղաքական ու իրավական վերնաշենքով, հասարակական գիտակցության ձևերով:

Սեփականության համապատասխան հարաբերությունները ներկայումս էլ ամրապնդվում և պաշտպանվում են պետության կողմից: Այսինքն՝ պետությունն օրենսդրական մակարդակով սահմանում է իրավական նորմեր, որոնք կարգավորում են համապատասխան սուբյեկտների միջև սեփականության տիրապետման, օգտագործման և տնօրինման հարաբերությունները: Դրանց շնորհիվ սեփականության հարաբերություններն ստանում են իրավահարաբերությունների ձև, իսկ դրանց սուբյեկտներն օժտվում են համապատասխան լիազորություններով, որոնք պաշտպանվում են պետության սահմանած նորմերով: Սեփականությունից՝ որպես տնտեսական կատեգորիայից, պետք է տարբերել սեփականության իրավունքը, որտեղ սեփականության տնտեսական հարաբերություններն իրավական արտահայտություն են ստանում և ամրապնդում¹: Եվ քանի որ սեփականության իրավահարաբերությունները կենտրոնական տեղ են զբաղեցնում թե՛ սահմանադրական, թե՛ քաղաքացիական, թե՛ քրեական, թե՛ վարչական, թե՛ մունիցիպալ ու էկոլոգիական և թե՛ այլ իրավունքների ճյուղերի համակարգում, ուստի սեփականության ինստիտուտը կարելի է դիտել որպես համալիր ինստիտուտ:

Բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքը բոլոր պետությունների համար էլ սեփականության իրավունքի կարևորագույն բաղադրամաս է: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ պետությունները շատ հաճախ հանդես են գալիս որպես այս կամ այն բնական ռեսուրսի բացառիկ սեփականատեր և որպես այդպիսին օժտված են համապատասխան բնական ռեսուրսի ոչ միայն օգտագործման և տիրապետման, այլև տնօրինման իրավազորությամբ:

Թվում է՝ անհերքելի է, որ մեծածավալ բնական հարստություն ունեցող պետությունները պետք է առավել հարուստ լինեն, բնակչության սոցիալական ապահովվածության մակարդակը պետք է բարձր լինի, իսկ աղքատության շեմը՝ ցածր: Սակայն բազմաթիվ երկրների օրինակներ հակառակն են ապացուցում: Մասնավոր-

¹ Տե՛ս **Տ.Կ. Բարսեղյան**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք. առաջին մաս, Եր., 2014, ԵՊՀ հր., էջ 291:

րապես, Ռուսաստանի Դաշնությունը, զբաղեցնելով հսկայական տարածք, հարուստ է բնական տարբեր ռեսուրսներով, առանձին տեսակներով համարվում է առաջատարն աշխարհում, սակայն բնակչության աղքատության մակարդակը շատ բարձր է այս երկրում: Եվ հակառակը, Հարավարևելյան Ասիայի որոշ երկրներում, ինչպես օրինակ, Ճապոնիայում, թեև բնական ռեսուրսների պաշարները շատ չեն, սակայն դրանք տնտեսապես զարգացած երկրներ են, և բնակչության սոցիալական ապահովվածության մակարդակը զգալիորեն բարձր է:

Մեր խորին համոզմամբ, նման հակասական իրավիճակներում ծագող բազմազան հարցերի պատասխանները կարելի է ստանալ բնական ռեսուրսների կառավարման մարմինների սահմանման և նրանց լիազորությունների բաշխման, բնական ռեսուրսների սեփականության իրավունքի սուբյեկտների և նրանց իրավունքների ու պարտականությունների սխեմաներում:

Բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքն իրավաբանական տեսանկյունից ունի երկու դրսևորում. առաջին՝ որպես իրավական ինստիտուտ, երկրորդ՝ որպես սեփականատիրոջ իրավագործությունների ամբողջություն¹:

Բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքը՝ որպես իրավական ինստիտուտ, այն իրավանորմերի ամբողջությունն է, որոնք կարգավորում են բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության հարաբերությունները, իսկ դրանք կարգավորող իրավանորմերի ամբողջությունը ձևավորում է սեփականության իրավունքն օբյեկտիվ իմաստով:

Սուբյեկտիվորեն բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքը սեփականատիրոջ հնարավորությունն է իր ունեցվածքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իր հայեցողությամբ և անկախ որևէ մեկից՝ օրենքով սահմանված շրջանակներում: Այն կանխորոշում է սեփականության ներքո գտնվող բնական ռեսուրսների ազատ օգտագործում սեփականատիրոջ կողմից: Այսինքն՝ բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքը սուբյեկտիվ իմաստով, ի տարբերություն օբյեկտիվի, միշտ պատկանում է կոնկրետ սուբյեկտի և սահմանափակված չէ ժամկետով: Չնայած վերոգրյալին՝ պետք է հաշվի առնել, որ այս իրավունքը բացարձակ իրավունք չէ և չի ենթադրում սեփականատիրոջ ապօրինի կամայականությունները իր սեփականության նկատմամբ: Այս համատեքստում հիշատակման արժանի է ՀՀ 2005 թ. Սահմանադրության հետևյալ դրույթը. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը...» (հոդվ. 31)²:

Ցավոք, ներկայումս գործող սահմանադրությունը սեփականություն իրավունքը նախատեսող հոդվածում հրաժարվել է այդ կարևոր մոտեցումն ամրագրելուց՝ շեշտադրելով միայն օրինական հիմքերով ձեռք բերված սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավագործությունները և սեփականության իրականացման հետ կապված որոշ այլ տարրեր: Իհարկե, գործող Սահմանադրության 12-րդ հոդվածում նախատեսված է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին, էկոլոգիական օրենսդրությունը համապատասխան օրենսգրքերի և օրենքների մակարդակով էլ սահմանում է շրջակա միջավայրին վնաս չպատճառելու պահանջը, սակայն, այնուամենայնիվ, գտնում ենք, որ, ինչպես ընդունված է մի շարք հետխորհրդային և զարգացած պետությունների սահմանադրություններում, առավել արդարացի կլիներ նաև ՀՀ Սահմանադրությամբ նախատեսել սեփականության իրականացման

¹ Տե՛ս **М.М. Бринчук**, Экологическое право. М., Юристъ, 2005, էջ 148:

² ԸՆդունվել է 27.11.2005թ., ուժի մեջ է մտել 06.12.2005թ., ՀՀՊՏ 2005.12.05/Հատուկ թողարկում, Հոդ.1426:

ընթացքում շրջակա միջավայրին վնաս չպատճառելու պահանջ, ինչն առավել կարևոր երաշխիք է բնապահպանական առումով:

Շարունակելով բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության հարաբերությունների սահմանադրական իրավակարգավորումների հարցը՝ նշենք, որ ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հայաստանի Հանրապետությունում ձանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

2. Ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են»¹:

Համակարծիք չենք 2015 թ. սահմանադրական ձևակերպման փոփոխության հեղինակների հետ, քանի որ, մեր խորին համոզմամբ, որևէ բնական ռեսուրսի նկատմամբ սեփականության իրավունքը որպես բացառիկ հռչակելն արդարացված չէ: Ավելի ճիշտ ենք համարում (մասնավոր սահմանադրական մակարդակով) բոլոր բնական ռեսուրսներին հավասար իրավական կարգավիճակ շնորհելու մոտեցումը: Բնականաբար, էկոլոգիական օրենսդրությունը, հաշվի առնելով յուրաքանչյուր առանձին բնական ռեսուրսի առանձնահատկությունները, համապատասխանաբար պետք է տարբեր ձևով սահմանի դրանց սեփականության կարգավորման հարաբերությունները: Ավելին, «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքում² նախատեսված է. «Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհը պետության բացառիկ սեփականությունն է»: Դժվար է լիարժեք հինավորումներ գտնել, թե ինչու են այս բնական ռեսուրսները պետության «բացառիկ» սեփականության ներքո հայտնվել տարբեր նորմատիվ ակտերով, կամ ինչու, օրինակ՝ բուսական աշխարհը ևս չի դասվել պետությանը բացառիկ սեփականության իրավունքով պատկանող բնական ռեսուրսների շարքին:

Գործող Սահմանադրության՝ սեփականության իրավունքը նախատեսող 60-րդ հոդվածում ամրագրված է. «...Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: ... Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի...»: Որպես ինքնիշխան, հանրային և մասնավոր իրավունքի առանձնահատուկ սուբյեկտ՝ Հայաստանի Հանրապետությունը կոնկրետ իրավական դրույթների միջոցով ինքն է որոշում պետական սեփականության իրավունքի սահմաններն ու բովանդակությունը, քաղաքացիական շրջանառության կանոնները, այդ հարաբերություններին իր մասնակցության ծավալն ու եղանակները, գույքի առանձին տեսակների կարգավիճակը³: Սեփականության հարաբերությունների հիմքում ընկած է նաև սահմանադրական հետևյալ դրույթը. «Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը»:

Ինչպես արդեն նշել ենք, սեփականությունն ու այն կարգավորող իրավական նորմերն ունեն պատմական բնույթ, զարգացման ընթացքում դրանք փոխվում են: Դրանով էլ պայմանավորված է հասարակության զարգացման տարբեր փուլերում սեփականության՝ հանրային, մասնավոր, համայնքային, խառը ձևերի գոյությունը:

¹ Ընդունվել է 06.12.2015թ., ուժի մեջ է մտել 22.12.2015թ., ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, Հոդ.1118:

² ՀՀ ՊՏ 2000.05.12/9(107), Ընդունվել է 03.04.2000, ուժի մեջ է մտել 12.05.2000:

³ Տե՛ս **Տ.Կ. Բարսեղյան**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք. Առաջին մաս, Եր., 2014, էջ 353:

Քննարկելով բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքի ձևերը՝ պետք է նշել, որ տարբեր ժամանակաշրջաններում սեփականության հարաբերությունները տարբեր բնույթ ու բովանդակություն են ունեցել: Հատկապես անկախության ձեռքբերումը բեկումնային քայլ էր: Բնական ռեսուրսների ամենատարբեր ոլորտներում գործող հարաբերություններում փոփոխությունները նոր պատկեր ուրվագծեցին Հայաստանի Հանրապետությունում բնական ռեսուրսների մասնավոր սեփականության բնագավառում:

Մասնավորապես, ի տարբերություն խորհրդային կառավարման ժամանակաշրջանում գործող հողի պետական սեփականության հարաբերություններին, անկախությունից հետո պետության հետ հողի սեփականատերերի շարքում հայտնվեցին քաղաքացիները, իրավաբանական անձինք և համայնքները¹: Հողի նկատմամբ մասնավոր սեփականության իրավունքի կողմնակիցները գտնում են, որ առանց դրա անհնարին է շուկայական տնտեսության զարգացումը, և դա կարևոր դրական քայլ է երկրում հատկապես գյուղատնտեսության և արտադրության զարգացման համար:

Անհրաժեշտ ենք համարում նախ և առաջ շեշտել, որ «...Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի» սահմանադրական դրույթը: Այս նորմի բովանդակությունը հիմք ընդունելով՝ ՀՀ հողային օրենսգիրքը մանրամասն սահմանում է քաղաքացիների, իրավաբանական անձանց, համայնքների և պետության՝ հողի նկատմամբ սեփականության հարաբերությունները, դրանց ծագման, փոփոխման ու դադարման հիմքերը, այն հողերը, որոնք չեն կարող սեփականության իրավունքով փոխանցվել քաղաքացիներին ու իրավաբանական անձանց և այլն: Ի դեպ, հողամասերի սեփականության հարաբերությունները, լինելով Հայաստանի Հանրապետության տնտեսության, արտադրության, քաղաքականության կարևորագույն հարաբերություններ, կարգավորվում են ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով, ՀՀ հողային օրենսգրքով, մի շարք այլ օրենքներով, կառավարության որոշումներով, ՀՀ Նախագահի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերով: Պետության տնտեսական, անվտանգության և մի շարք այլ տեսանկյուններից հույժ կարևոր ենք համարում օտարերկրյա քաղաքացիներին ու քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ-ում հողամասի սեփականության իրավունք չտրամադրելու հողվածի բովանդակությունը:

Համայնքային սեփականությունը սեփականության ինքնուրույն տեսակ է: Այն հանրային սեփականություն է, քանի որ նրա սուբյեկտները՝ համայնքային, այսինքն՝ հանրային-իրավական կազմավորումները, իրենց հիմնական գործունեությունն իրականացնում են հանրային իրավունքի շրջանակներում, իսկ քաղաքացիական շրջանառությանը մասնակցում են հանրային գործունեության իրականացումը ապահովելու անհրաժեշտությունից ելնելով²: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ «Համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, և համայնքային սեփականության իրավունքի սուբյեկտներ են քաղաքային, գյուղացիական և թաղային համայնքները»³:

Անկախացումից հետո ՀՀ-ում իրականացված վարչատարածքային բաժանմամբ ստեղծված համայնքների գործունեության մեջ կարևորագույն դեր ու նշանակություն ունի հատկապես հողի նկատմամբ սեփականության իրավունքը: Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածով նախատեսված կարգով համայնքների սեփականու-

¹ ԸՆդունվել է 29.01.1991թ., չի գործում, ՀՀԳԽՏ 1991/2:

² Տե՛ս **Տ.Կ. Բարսեղյան**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք. Առաջին մաս, Եր., 2014, էջ 365:

³ Ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

յանն են պատկանում տվյալ համայնքի սահմանագծի ներսում գտնվող հողերը, բացառությամբ պետությանը, քաղաքացիներին, իրավաբանական անձանց և սեփականության այլ սուբյեկտներին պատկանող հողերը: Համայնքի սեփականությանը կարող են պատկանել նաև համայնքի սահմանից դուրս գտնվող և համայնքի սեփականությանը հանձնված կամ համայնքի ձեռք բերած հողամասերը: Այս և նմանատիպ մի շարք հարաբերություններ մանրամասն իրավական կարգավորման են ենթարկված ինչպես ՀՀ հողային օրենսգրքով, այնպես էլ ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով¹ և մի շարք այլ իրավական ակտերով:

Ցանկանալով ներկայացնել որոշ բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքի առանձնահատկությունները՝ նշենք, որ ընդերքի սեփականության բնագավառում ՀՀ Սահմանադրությունն այն հռչակում է պետության բացառիկ սեփականություն: Ի դեպ, պետք է նկատի ունենալ, որ ընդերքն ավելի լայն հասկացություն է, քան օգտակար հանածոներն են, քանի որ այն և՛ արդյունահանվող վառելիքի աղբյուր, և՛ նյութական հումք է, և՛ գիտական ուսումնասիրությունների օբյեկտ: 2011 թ.-ին ընդունված «Ընդերքի մասին» օրենսգիրքը նախատեսում է. «1. Հայաստանի Հանրապետության ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է, որը կարող է տրամադրվել օգտագործման միայն երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով:

2. Ընդերքի տեղամասերը չեն կարող լինել առքուվաճառքի, գրավի առարկա կամ օտարվել այլ ձևով»²:

Ընդերքօգտագործման կարևորագույն հիմնահարցերից է նաև «Ընդերքի մասին» օրենսգրքի 20-րդ հոդվածով նախատեսված այն նորմը, ըստ որի՝ «...3. Անժամկետ և անհատույց ընդերքօգտագործումն իրականացվում է ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանումը շահույթ ստանալու նպատակ չիետապնդող, սեփական կարիքների համար ընդերքօգտագործողին՝ սեփականության իրավունքով պատկանող հողամասերից»: Այս նորմը թեև համապատասխան հողամասի սեփականատիրոջն իրավունք է վերապահում իրականացնել ընդերքօգտագործման իրավունք, սակայն թե՛ նույն հոդվածով, թե՛ որոշ այլ նորմերով նախատեսված են համապատասխան սահմանափակումներ՝ կապված և՛ ընդերքօգտագործման սահմանների, և՛ օբյեկտի, և՛ ընդերքօգտագործման նպատակի հետ, ինչը կարևոր երաշխիք է ընդերքօգտագործման իրավունքի իրականացման ճանապարհին պետության վերահսկողության իրականացման առումով:

Բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության հարաբերություններում խիստ կարևորելով նաև անտառների դերն ու նշանակությունը յուրաքանչյուր պետության համար՝ պետք է նշել, որ ՀՀ անտառային օրենսգիրքը այս ոլորտի սեփականության հարաբերությունների իրավակարգավորման առումով «Անտառների և անտառային հողերի նկատմամբ սեփականության իրավունքը» վերտառությամբ 4-րդ հոդվածում նախատեսում է՝

«1. Անտառները և անտառային հողերը լինում են պետական, համայնքային և մասնավոր:

2. Պետական անտառները և անտառային հողերը ենթակա չեն օտարման համայնքներին, իրավաբանական անձանց ու քաղաքացիներին:

3. Համայնքների, իրավաբանական անձանց և քաղաքացիների սեփական հողերի վրա դրանց սեփականատերերի կողմից հիմնված անտառները համարվում են նրանց սեփականությունը:

4. Անտառների նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքները

¹ Ընդունվել է 07.05.2002թ., ուժի մեջ է մտել 21.06.2002թ. ՀՀՊՏ 2002.06.21/21(196), Հոդ.473:

² Ընդունվել է 28.11.2011թ., ուժի մեջ է մտել 01.01.2012թ., ՀՀՊՏ 2011.12.21/69 (872), Հոդ.1661:

ենթակա են պետական գրանցման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով»¹:

Հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում, որ անտառների և անտառա-
յին հողերի նկատմամբ գործում է ինչպես մասնավոր, այնպես էլ պետական ու հա-
մայնքային սեփականությունը, ինչն էականորեն տարբերվում է խորհրդային կառա-
վարման ժամանակաշրջանում տիրող իրավիճակից, երբ անտառները և անտառա-
յին հողերը պետության բացառիկ սեփականություն էին:

Բնական ռեսուրս հասկացության առավել խորքային ընկալման համար
անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև «բնության օբյեկտ» և «բնական ռե-
սուրս» հասկացությունների տարբերությանը. առաջինն ավելի լայն հասկացություն է,
քան մյուսը, քանի որ բնական ռեսուրսն էկոլոգիական իրավունքում ընկալվում է որ-
պես բնության օբյեկտի այն հատվածն ու այն ծավալը, որն օգտագործվում, վերց-
վում կամ կարող է վերցվել համապատասխան կարիքների բավարարման համար,
դառնալ արտադրության կամ սպառման միջոց²: Գտնում ենք, որ ՀՀ օրենսդրության
լուրջ բացերից է այն, որ սահմանված չեն «բնության օբյեկտ» և «բնական ռեսուրս»
հասկացությունները, մինչդեռ դրանք շրջակա միջավայրի պահպանության և ռացիո-
նալ բնօգտագործման կենտրոնական ինստիտուտներ են: Այստեղ, կարծում ենք,
պետք է շեշտել ՀՀ-ում «էկոլոգիական քաղաքականության մասին» օրենքի անհրա-
ժեշտությունը, որը մի շարք կարևոր այլ հասկացությունների հետ մեկտեղ անպայմա-
նորեն կնախատեսի նաև վերոհիշյալ հասկացությունները ու դրանց հետ կապված
հարաբերությունների իրավակարգավորման հիմնադրույթները:

Հավելենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը 134-րդ հոդվածի ուժով հողա-
մասերը, ընդերքի մասերը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա
տնկիները... դասում է անշարժ գույքի շարքին³:

Առանձնակի ուշադրության արժանի է այն փաստը, որ հստակ պետք է տա-
րանջատել բնության օբյեկտն ու բնական ռեսուրսի նկատմամբ սեփականության ի-
րավունքի օբյեկտը: Բնական ռեսուրսի նկատմամբ սեփականության իրավունքի
օբյեկտը բնական ռեսուրսի նկատմամբ սեփականության իրավունքի տարրերից է
սուբյեկտի և բովանդակության հետ միասին: Բնական ռեսուրսների սեփականու-
թյան իրավունքի օբյեկտները բնության այն արժեքներն են, որոնց շուրջ ձևավորվում
են սեփականության հարաբերությունները: Այդպիսիք են հողը, ընդերքը, ջրերը,
կենդանական աշխարհը, բուսական աշխարհը և այլն: Բնության ռեսուրսների սե-
փականության իրավունքի օբյեկտների թվին դասվում են նաև հատուկ պահպան-
վող բնական տարածքները, որոնք ցամաքի և համապատասխան օդային ավազա-
նի՝ օրենքով առանձնացված տարածքներն են, և այն առանձին բնական օբյեկտնե-
րը, որոնք բնապահպանական, գիտական, կրթական, առողջարարական, պատմա-
կան-մշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք ունեն, և
որոնց համար սահմանված է հատուկ ռեժիմ:

Հիմնախնդրի վերլուծությանը վերաբերող կարևորագույն հարցերից մեկն այն
է, թե արդյոք բոլոր բնական օբյեկտները կարող են հանդես գալ որպես սեփակա-
նության իրավունքի օբյեկտներ: Եվ եթե հողերի և այլ բնական օբյեկտների պարա-
զայում կարելի է հիմնավոր ձևով դրական պատասխանել հարցին, ապա մթնոլոր-
տային օդի պարագայում հարցը մնում է անպատասխան: Մասնավորապես, ՀՀ
«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի⁴ համաձայն՝ մթնոլորտային
օդը բնական միջավայրի բաղադրամաս է, որը մթնոլորտը կազմող գազերի բնա-
կան խառնուրդ է և գտնվում է բնակելի, արտադրական և այլ տեսակի շենքերից

¹ Ընդունվել է 24.10.2005թ., ուժի մեջ է մտել 17.12.2005թ. ՀՀՊՏ 2005.12.07/75(447), Հոդ.1432:

² Տե՛ս **М.М.Бринчук**, Экологическое право. М., 2005, էջ 57:

³ Ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

⁴ Ընդունվել է 11.10.1994թ., ՀՀ ԳԽՏ 1994/21:

դուրս: Փաստորեն, մթնոլորտային օդը թեև համարվում է բոլոր կենդանի գոյացությունների կենսագործունեության բնական բաղադրատարր, սակայն սեփականության իրավունքի օբյեկտ չի հանդիսանում, ինչը պայմանավորված է դրա ֆիզիկական վիճակով: Այն՝ որպես նյութական սուբստանցիա, մշտապես գտնվում է տուրբուլենտ շարժման մեջ, չի կարող անհատականացվել, ուստի չի կարող գտնվել որևէ սուբյեկտի տիրապետման տակ: Մինչդեռ սեփականատիրոջ իրավագործություններից մեկը հենց տիրապետումն է: Մթնոլորտային օդը, ինչպես նաև օզոնային շերտը, փոթորիկները չեն կարող տնտեսական շահագործման ենթարկվել¹: Այսպիսով՝ հողերը, ընդերքը և մյուս բնության օբյեկտները կարող են հանդես գալ որպես սեփականության օբյեկտ՝ բացառությամբ մթնոլորտային օդի:

Քննարկվող թեմայի շրջանակներում հետաքրքրաշարժ է նաև հատուկ պահպանվող բնական տարածքների խնդիրը: Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի² դրանց կատեգորիաները սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը: Միջազգային և հանրապետական նշանակության՝ բնության հատուկ պահպանվող տարածքների հողերը պետության սեփականությունն են: Ազգային պարկերի ամբողջականությունը և պահպանության ռեժիմն ապահովելու նպատակով դրանց ռեկրեացիոն և տնտեսական գոտիներում, բացի պետական սեփականության հողերից, կարող են ընդգրկվել նաև այլ սեփականատերերի պատկանող հողեր: Տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքները կարող են ստեղծվել նաև համայնքային սեփականություն համարվող հողերում: Սույն հողվածի բովանդակության վերլուծությունից պարզ է դառնում, որ թեև բնության հատուկ պահպանվող տարածքները պատկանում են պետությանը, սակայն առանձին դեպքերում դրանք կարող են գտնվել նաև քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքների՝ սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա: Հաշվի առնելով բնության հատուկ պահպանվող տարածքների դերն ու նշանակությունը՝ նույն օրենքը սահմանում է նաև, որ հողի սեփականատերերը կամ օգտագործողը պարտավոր են պահպանել բնության հատուկ պահպանվող տարածքների համար օրենքով սահմանված պահպանության համապատասխան ռեժիմը և օգտագործման կարգը: Այս ռեժիմների պահպանության ապահովումը խթանելու համար Հայաստանի Հանրապետության օրենքով կարող են սահմանվել հարկերի և այլ պարտադիր վճարների արտոնություններ:

Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը մի կողմից լիովին հիմնավոր է համարում քաղաքացիների, իրավաբանական անձանց ու համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերում բնության հատուկ պահպանվող տարածքների գոյությունը, սակայն մյուս կողմից դրանց պահպանության արդյունավետությունը և այդ տարածքների նկատմամբ պատասխանատվության համապատասխան մակարդակ ապահովելու համար օրենքով սահմանում է պահպանության հատուկ նորմեր:

Առանձնահատուկ ուշադրության արժանի է նաև ֆիզիկական անձի՝ որպես բնության ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքի սուբյեկտի հարցի քննարկումը, քանի որ Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո շուկայական հարաբերությունների անցման, տնտեսական ազատ մրցակցության պայմաններում ֆիզիկական անձի դերն էականորեն փոխվել է: Ի տարբերություն խորհրդային իրավակարգավորումներում ֆիզիկական անձի՝ սահմանափակ իրավունքների՝ ներկայումս նա օժտված է էականորեն լայն իրավունքներով և ազատություններով: ՀՀ օրենսդրությամբ սահմանված է, որ ինչպես հողամասերը, այնպես էլ անտառները կարող են հանդես գալ որպես ֆիզիկական անձի սեփականության ի-

¹ Տե՛ս **Б.В. Ерофеев**, Экологическое право России. М., 2002, էջ 180:

² Ընդունվել է 27.11.2006թ., ուժի մեջ է մտել 04.01.2007թ., ՀՀՊՏ 2006.12.25/66 (521), Հոդ. 1363:

րավունքի օբյեկտներ: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրությունն ու ՀՀ հողային օրենսգիրքը հստակ սահմանում են, որ հողի նկատմամբ սեփականության իրավունքն ամրագրված է միայն ՀՀ քաղաքացիների համար, իսկ օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք Հայաստանի Հանրապետությունում կարող են լինել հողի սեփականատեր միայն օրենքով նախատեսված՝ որպես հատուկ կացության կարգավիճակ ունեցող անձ (ՀՀ հողային օրենսգիրք¹ 4-րդ հոդ.):

Քննարկվող հարցն առավել լիարժեք ներկայացնելու համար կարևոր ենք համարում մատնանշել նաև հողային օրենսգրքի հետևյալ դրույթը.

«1. Օտարերկրյա պետությունները և միջազգային կազմակերպությունները դիվանագիտական և ներկայացուցչական նպատակների համար ցանկացած սեփականատիրոջից օրենքով սահմանված կարգով հողամաս կարող են ձեռք բերել կամ վարձակալել կամ անհատույց (մշտական) օգտագործման կամ կառուցապատման իրավունքով օգտագործել միայն Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի հիմնավորած միջնորդության հիման վրա ընդունված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ միջազգային պայմանագրի համաձայն՝ պահպանելով փոխադարձության սկզբունքը:

2. Պետության սեփականություն համարվող հողամասերը օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին դիվանագիտական և ներկայացուցչական նպատակների համար տրամադրվում են ուղղակի վաճառքի, անհատույց սեփականության իրավունքով տրամադրման, ինչպես նաև վարձակալության կամ անհատույց (մշտական) օգտագործման, կառուցապատման իրավունքով՝ պահպանելով փոխադարձության սկզբունքը» (հոդ. 63.1):

Փաստորեն, ՀՀ օրենսդրությունը հստակ նախատեսում է այն խիստ սահմանափակ հիմքերը, որոնցով օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք, ինչպես նաև օտարերկրյա պետությունները և միջազգային կազմակերպությունները դիվանագիտական և ներկայացուցչական նպատակների իրականացման համար կարող են դառնալ հողամասի սեփականատերեր:

Կարևոր ենք համարում ընդգծել նաև այն հանգամանքը, որ թեև սեփականատերն ինքն է որոշում իր սեփականությունն օգտագործելու կամ չօգտագործելու իրավունքի իրացումը, սակայն պետք է հաշվի առնի, որ առանձին դեպքերում օրենքով հստակ ժամանակահատված է նախանշված որոշ իրավունքների իրացման համար: Ասվածի վառ հիմնավորումը տրվում է ՀՀ հողային օրենսգրքի 105-րդ հոդվածով նախատեսված դրույթով, ըստ որի՝ երեք տարի շարունակ գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողերը չօգտագործելը հիմք է հանդիսանում սեփականատիրոջից հողամասը դատական կարգով անհատույց վերցնելու համար²:

Այս նորմը ևս մեկ անգամ հիմնավորում է այն մոտեցումը, որ ինչքան էլ սեփականատերն ունենա իր սեփականության նկատմամբ բազմաթիվ լիազորություններ, միևնույնն է, շրջակա միջավայրի և նրա առանձին բաղադրիչների առանձնահատկությունները հաշվի առնելու հիման վրա ստեղծված օրենսդրական պահանջները մնում են գերակա:

Այսպիսով՝ բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության հարաբերությունները, լինելով յուրաքանչյուր պետության գոյության ու հասարակության կենսագործունեության կարևորագույն հիմք, մանրամասն իրավական կարգավորման են ենթարկվում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և ընթացիկ օրենսդրությամբ՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու դրույթներին համապատասխան:

¹Ընդունվել է 02.05.2001թ., ուժի մեջ է մտել 15.06.2001թ., ՀՀՊՏ 2001.06.15/17(149), Հոդ.457:

²Ընդունվել է 02.05.2001թ., ուժի մեջ է մտել 15.06.2001թ., ՀՀՊՏ 2001.05.15/17(149), Հոդ.457:

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ПРАВА СОБСТВЕННОСТИ НА ПРИРОДНЫЕ РЕСУРСЫ В ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ И ПРАКТИКЕ РА

Олимпия Гегамян

*Ассистент кафедры гражданского процесса ЕГУ,
кандидат юридических наук*

Данная статья посвящена праву собственности на природные ресурсы, которая имеет первостепенное значение для каждой страны, в том числе и для Республики Армения. В статье изложены законодательные положения по регулированию данной сферы, рассмотрены недостатки, пробелы, особенности правприменительной практики.

В статье представлены конституционные положения в разные периоды и действующие отраслевые нормы.

Проведя анализ, в статье представлены рекомендации, которые по нашему мнению, будут способствовать совершенствованию законодательства и эффективному осуществлению права собственности на природные ресурсы.

SOME FEATURES OF THE RIGHT OF OWNERSHIP TO NATURAL RESOURCES IN THE RA LEGISLATION AND PRACTICE

Olympia Geghamyan

*Docent of the YSU Chair of Civil Procedure
Candidate of Legal Sciences*

The present article is devoted to the right of ownership to natural resources that is primary importance to any country as well as to the Republic of Armenia. The article outlines the legislative regulations, the gaps, shortcomings and practice.

The article presents constitutional regulations in different periods and current sectoral regulations.

As a result of that analysis, several proposals are introduced which, in our opinion, will contribute to the improvement of legislation and the effective realization of the right of ownership to natural resources.

Բանալի բառեր – բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունք, բնական ռեսուրսի նկատմամբ սեփականության իրավունքի օբյեկտ, բնական ռեսուրսի նկատմամբ սեփականության իրավունքի ձևերը:

Ключевые слова – право собственности на природные ресурсы, объект права собственности на природные ресурсы, формы права собственности на природные ресурсы.

Key words – the right of ownership to natural resources, the object of the right of ownership to natural resources, forms of the right of ownership to natural resources.